

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈԱՅԻՈՆԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան Տնտեսագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի հունիսի 4-ին ժամը 15⁰⁰-ին Երևանի
պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական
խորհրդում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի հունիսի 3-ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ա. Յ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Չեղարկության թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսության պայմաններում չափազանց կարևոր նշանակություն ունի պետական գնումների համակարգը, որի հիմնական խնդիրը պետական և հասարակական կարիքների բավարարումն է: Այն, հանդիսանալով բյուջետային միջոցների զգալի մասի բաշխման կարևոր օղակներից, մեծապես պայմանավորում է բյուջետային ծախսերի արդյունավետությունը: Ներկայումս հանրապետությունում պետական պատվերների տեղաբաշխման տարբեր փուլերն ունեն օրենսդրական կարգավորման, ինստիտուցիոնալ և մեթոդական ապահովվածության տարբեր աստիճաններ: Գործող օրենսդրությունը չի ապահովում պետական պատվերների տեղաբաշխման ամբողջ ցիկլի կարգավորման մոտեցումների միասնականություն: Պետական պատվերների ձևավորման փուլում գործում է բյուջետային օրենսդրությունը, որը հիմնականում կողմնորոշված է բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման ապահովմանը: Սակայն, դրանով հանդերձ, սահմանված չեն պետական կարիքների ծավալային և որակական ցուցանիշների որոշման կարգը և չափանիշները, իսկ բյուջետային գործընթացի և պետական գնումների պլանավորման փոխկապվածությունը, ընդհանուր առմամբ, ապահովված չէ: Արդյունքում, բացակայում են բյուջետային հատկացումների, տրամադրվող պետական ծառայությունների որակական ու ծավալային ցուցանիշների և դրանց արդյունքների միջև կապերը: Բացի այդ, ամբողջությամբ չի օգտագործվում պետական պատվերի ներդրումային ներուժը: Տնտեսության իրական հատվածը շատ հաճախ չի տիրապետում ամբողջական և լիարժեք տեղեկատվության պետական կարիքների բավարարման համար պլանավորվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների վերաբերյալ: Չի օգտագործվում նաև պետական պատվերի ինովացիոն ներուժը, ինչն էական դեր կարող է խաղալ տնտեսության արդիականացման հարցում: Օրենսդրությամբ նախատեսված որակի ապահովման մեխանիզմները հիմնականում ուղղված են մատակարարների նկատմամբ սանկցիաների կիրառմանը, ինչի արդյունքում պետական պատվերների կատարումը վտանգվում է:

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացված բարեփոխումների արդյունքում պետական գնումների համակարգի կայացման և զարգացման ուղղությամբ արձանագրված դրական առաջընթացով հանդերձ, պետք է նշել, որ ներկայումս կարելի է խոսել ընդամենը բարեփոխումների առաջին փուլի ավարտի մասին, որի ընթացքում ներդրվեցին պատվերների տեղաբաշխման նոր մոտեցումներ

և ընթացակարգեր: Վերջիններս, չնայած իրենց ձևով շուկայական են, սակայն բովանդակությամբ միշտ չէ, որ ունեն համապատասխան կերպով մշակված նորմատիվ իրավական և տնտեսական մեխանիզմներ: Ըստ էության, բարեփոխումների շրջանակից դուրս են մնացել պետական կարիքների բավարարման ընդհանուր գործընթացի այնպիսի կարևոր փուլեր, ինչպիսիք են այդ կարիքների որոշումը և պլանավորումը, ապրանքների և ծառայությունների գնման պատվերների ձևավորումը, պայմանագրերի կատարման նկատմամբ մոնիտորինգը և այլն: Արդյունքում, ներկայումս ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրն ի վիճակի չէ ապահովել պետական գնումների համակարգի էֆեկտիվությունը, ինչը խոչընդոտում է պետական գնումների՝ որպես տնտեսության կարգավորման և բիզնեսի աջակցության գործիքի կիրառմանը: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին հանրապետությունում պետական գնումների համակարգի բարեփոխումների հիմքում դրվել են շուկայական տնտեսավարման սկզբունքները և պետական պատվերների մշակման ու տեղաբաշխման ազատական մոտեցումները, այդուհանդերձ, ռազմավարության և մարտավարության հստակ մշակված մոտեցումների բացակայությունը, պետության տնտեսական դերի թերագնահատումը և որպես հետևանք, բարեփոխումների գործընթացի նկատմամբ համալիր մոտեցման բացակայությունը հանգեցրել են նրան, որ գնումների համակարգը աչքի է ընկնում կոռումպացվածության բարձր մակարդակով: Միաժամանակ, պետական ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը պահանջում է բյուջետային միջոցների առավել արդյունավետ և խնայողական օգտագործում: Դա, ի թիվս այլ խնդիրների, ենթադրում է նաև պետական գնումների համակարգի բարեփոխում, որը հիմնված կլինի պետական կարիքների բավարարման գործընթացին համալիր մոտեցման, պետական գնումների համակարգում որակական փոփոխությունների իրականացման, ինստիտուցիոնալ միջավայրի բարեփոխման վրա: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի *հրատապությունն ու արդիականությունը*:

Չետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական տնտեսության պայմաններում պետական գնումների համակարգի արդյունավետության բարձրացմանն ու բյուջետային միջոցների ռացիոնալ կառավարմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել պետական գնումների էությունը և տնտեսագիտական բովանդակությունը, վերլուծել դրա տեսական և մեթոդալոգիական հիմքերը և հստակեցնել տեղը և դերը ժամանակակից տնտեսության պայմաններում,
- դիտարկել տարբեր տնտեսական համակարգերում պետական գնումների համակարգի զարգացման օրինաչափությունները և մշակել գնումների կազմակերպական, օրենսդրական և տնտեսական մեխանիզմների բարեփոխման հայեցակարգային մոտեցումներ,
- ուսումնասիրել պետական գնումների իրականացման ինստիտուցիոնալ մեխանիզմները և դրանց գործունեության առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում,
- վերլուծել պետական գնումների համակարգի գործունեության միջազգային փորձը և գնահատել դրա կիրառման հնարավորությունները հանրապետությունում,
- ուսումնասիրել Հայաստանում գործող պետական գնումների համակարգի առանձնահատկությունները և բացահայտել դրա արդյունավետության բարձրացման ոլորտում առկա հիմնախնդիրները,
- հետազոտել պետական գնումների շուկան, բացահայտել դրա զարգացման միտումները և հիմնախնդիրները, մշակել պետական գնումների շուկայում մրցակցային միջավայրի ապահովման պայմանները,
- մշակել գնումների պետական կարգավորման մեխանիզմի կատարելագործմանը և պետական գնումների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը բյուջետային ծախսերի կառավարման գործընթացն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ պետական գնումների համակարգը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն

ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսա վիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- «պետական գնումներ» և «պետական պատվերներ» հասկացությունների տեսական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են պետական կարիքների համար իրականացվող գնումների արդյունավետության ապահովման մակրոտնտեսական և կազմակերպարավական նախադրյալները, ժամանակակից տնտեսության պայմաններում պետական գնումների համակարգի գործառույթների վերլուծության արդյունքում հիմնավորվել է պետական գնումների համակարգի միջոցով հայրենական արտադրության և համախառն պահանջարկի խթանման անհրաժեշտությունը,
- պետական գնումների գործընթացի փուլերի համալիր բարեփոխումների նպատակով մշակվել են պետական գնումների համակարգի զարգացման այնպիսի հայեցակարգային մոտեցումներ և մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու այդ փուլերի միջև անհրաժեշտ փոխկապակցվածություն,
- հանրապետությունում պետական գնումների համակարգի գործունեության համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա բացթողումները և թերությունները, առաջարկվել են լուծումներ պետական գնումների համակարգի կատարելագործման միջոցով բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մշակվել է պետական գնումների համակարգի արդյունավետության գնահատման ցուցանիշների և չափորոշիչների համախումբ,
- պետական գնումների համակարգի զարգացման և տվյալ գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվել է իրականացնել պետական պատվերների տեղաբաշխման ընթացակարգերի տարբերակում, ելնելով գնումների տեսակներից և պայմանագրի առարկայի առանձնահատկություններից:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Բյուջետային միջոցների ռացիոնալ կառավարման և պետական գնումների համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և

գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում բյուջետային համակարգի կատարելագործման միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ուղղությամբ: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկուր և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 4. գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 133 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Հետազոտության առաջին՝ «Բյուջետային ծախսերի և պետական գնումների էությունը և տնտեսական նշանակությունը», գլուխը նվիրված է բյուջետային միջոցների տնտեսական բովանդակության, պետական գնումների էության և տեսական հիմքերի ուսումնասիրությանը, ինչպես նաև ժամանակակից տնտեսության պայմաններում պետական գնումների համակարգի տեղի և դերի գնահատմանը:

Երկրի տնտեսական և քաղաքական զարգացման գործում չափազանց մեծ է պետական ֆինանսական համակարգի դերը, որի կազմում իր կարևորությամբ հատկապես առանձնանում է պետական բյուջեն: Վերջինս, ապահովելով ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը և տնտեսական ու քաղաքական խնդիրների լուծման նպատակով օգտագործումը, հանդես է գալիս որպես տնտեսության պետական կարգավորման կարևոր լծակ՝ նպաստելով սոցիալ-տնտեսական բնույթի տարբեր խնդիրների լուծմանը: Այս առումով, պետական գնումները կարելի է սահմանել որպես բյուջետային միջոցների հաշվին պետության կողմից երկրի ներսում կամ արտերկրում արտադրվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում՝ հասարակությանն անհրաժեշտ

բարիքներով ապահովելու նպատակով: Իր տնտեսական էությանը «պետական գնումներ» հասկացությունն արտացոլում է հասարակական պահանջունքները՝ արտահայտված պետական պահանջարկի տեսքով:

Ընդհանուր առմամբ, պետությունն իրականացնելով իր գործառույթները և լուծելով սոցիալ-տնտեսական համակարգի խնդիրները, բնականաբար, պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում տարբեր սուբյեկտների հետ: Չենց այդ համակարգի միջոցով են իրականացվում պետություն-պատվիրատուի և տարբեր տնտեսավարող սուբյեկտների միջև տնտեսական կապերը: Նման համակարգն, անշուշտ, ենթադրում է մրցակցային պայքար պետական պատվերի հայցորդների միջև, որի առարկան պետական կարիքների բավարարման համար իրականացվող գնումներին ուղղվող բյուջետային միջոցներն են: Չարկ է նշել, որ խառը տնտեսության պայմաններում մրցութային եղանակով վաճառքը հանդիսանում է ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար պետական պատվերների տեղաբաշխման առավել տարածված եղանակներից: Պետական գնումների համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գնումներն իրականացվում են բյուջետային միջոցների հաշվին, իսկ ձեռքբերման ենթակա ապրանքների և ծառայությունների բնութագրիչների որոշումը, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է պետական լիազոր մարմինների կողմից:

Պետական գնումների համակարգը ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում չափազանց կարևոր նշանակություն ունի, ինչը դրսևորվում է, մի կողմից, հասարակական կարիքների բավարարման, իսկ մյուս կողմից, տնտեսության տարբեր ոլորտների խթանման միջոցով: Ավելին, տնտեսական զարգացման ներկա փուլում այն ձեռք է բերել առանձնահատուկ կարևորություն, պայմանավորված պետության կողմից լուծման ենթակա խնդիրների բազմազանությամբ: Տնտեսապես զարգացած երկրներում համապետական շուկան ապահովում է համազգային (համախառն պահանջարկ), իսկ պետական շուկան՝ պետական պահանջունքների (պետական պահանջարկ) բավարարումը: Պետական պատվերներն օգտագործելով որպես հզոր տնտեսական գործիք, պետությունը լուծում է որոշակի սոցիալ-տնտեսական խնդիրներ, մասնավորապես, խթանում է տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացումը, գիտական հետազոտությունների իրականացումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը և այլն: Որոշ առանցքային ոլորտներում պետական պատվերներն օգտագործվում են որպես կարգավորման գործիք, որը հնարավորություն է տալիս ներդրումների իրականացման ոլորտում տեղական արտադրողներին կողմնորոշել նախընտրելի որոշումների ընդունմանը,

տնտեսության մրցունակության պահանջներին բավարարող կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը: Փաստորեն, պետական գնումների շուկայում գործում են մասնակիցների երկու հիմնական խմբեր՝ պետական պատվիրատուներ և պետական պատվերների կատարողներ: Պետական պատվիրատուների՝ որպես պետության շուկայական գործակալների դերում հանդես են գալիս մասնագիտացված կառույցները կամ պետական պայմանագրեր կնքելու իրավասություն ունեցող նախարարությունները, դրանց առանձին ստորաբաժանումները, պետական գերատեսչությունները և ձեռնարկությունները: Այսպիսով, պետական պատվիրատուն կարող է դիտարկվել որպես պետական գնումների շուկայի սուբյեկտ, որը ձգտում է առավելագույնի հասցնել գնվող ապրանքի օգտակարությունը ֆինանսական սահմանափակումների պայմաններում: Այսինքն, գնումների արդյունավետությունը կարող է արտահայտվել ինչպես պետական պատվերների մրցութային տեղաբաշխման ժամանակ ֆինանսական միջոցների տնտեսումների, այնպես էլ բյուջետային միջոցների օպտիմալ պլանավորումից և օգտագործումից ստացվող էֆեկտի մեծությամբ: Այս դեպքում, պետական պատվիրատուին հատկացվող բյուջետային միջոցների օգտագործման տնտեսական արդյունավետությունն ապահովվում է պետական պատվերների պլանավորման և տեղաբաշխման օպտիմալացման, ինչպես նաև դրա իրականացման նկատմամբ վերահսկողության ճիշտ կազմակերպման ճանապարհով:

Ատենախոսության երկրորդ՝ «Բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները և պետական գնումների համակարգի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում», գլուխը նվիրված է մակրոտնտեսական իրավիճակի դինամիկայի և բյուջետային քաղաքականության ուղղությունների, պետական գնումների համակարգի կազմակերպարավական հիմքերի և պետական գնումների կազմակերպման միջազգային փորձի վերլուծությանը:


Քաղաքական և տնտեսական բարեփոխումների անցած ժամանակահատվածում հանրապետությունում լայնամասնապես միջոցառումներ իրականացվեցին շուկայական սկզբունքների վրա հիմնված տնտեսության ձևավորման ուղղությամբ, որոնց շարքում իր կարևորությամբ հատկապես առանձնանում էր շուկայական հարաբերությունների պահանջներին բավարարող, ինչպես նաև պետության գործառույթների պատշաճ իրականացումն ապահովող բյուջետային համակարգի կառուցումը և զարգացումը:

Պետության առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում, ակնհայտորեն, մեծ նշանակություն ունի արդյունավետ ծախսային քաղաքականության իրականացումը, որի հասցեականությունից և նպատկամետությունից է կախված տնտեսական զարգացման ապահովումը: Նման

խնդրի լուծումը ենթադրում է բյուջետային հատկացումների հիմնավորվածության ապահովում, ակնկալվող արդյունքների իրատեսականության գնահատում և առկա խնդիրների լուծման համար ծրագրանպատակային մոտեցումների կիրառում: Ընդ որում, գլխավոր նպատակը պետք է լինի պետության գործառույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ապահովվածության խնդրի լուծումը և պետական կարիքների բավարարումը: Պետք է նկատի ունենալ, որ ֆինանսական սուղ միջոցների պայմաններում, որպես կանոն, հատկապես կարևորվում է դրանց նպատակային և արդյունավետ օգտագործումը: Նման իրավիճակում պետության խնդիրն է դառնում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանը բյուջետային քաղաքականության նպատակադրումը:

Կարելի է նշել որ վերափոխումների անցած ժամանակահատվածում հանրապետությունում ձևավորվել է շուկայական հարաբերությունների հիմնական պահանջներին բավարարող բյուջետային համակարգ՝ հիմնված օրենսդրաիրավական և ինստիտուցիոնալ համապատասխան բազայի վրա: Դրանով հանդերձ, դեռևս ամբողջությամբ լուծված չեն տվյալ ոլորտում գոյություն ունեցող մի շարք հիմնախնդիրներ, որոնք լուրջ խոչընդոտ են հանդիսանում արդյունավետ ծախսային քաղաքականության իրականացման համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ բյուջետային համակարգի գործունեության վրա չափազանց մեծ է մակրոտնտեսական միջավայրի ազեցությունը: Վերջին տարիներին հանրապետությունում ձևավորված մակրոտնտեսական միջավայրը, ընդհանուր առմամբ, բարենպաստ էր բյուջետային քաղաքականության իրականացման համար: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ունեցավ լուրջ ազդեցություն հանրապետության տնտեսության վրա, ինչի հետևանքով երկրում արձանագրվեց աննախադեպ տնտեսական անկում: 2010 թվականից սկսվեց վերականգնման գործընթացը և հետագա տարիներին հանրապետության տնտեսությունը դրսևորեց դանդաղ վերականգնման որոշակի միտումներ: Նման զարգացումները, բնականաբար, իրենց ազդեցությունը թողեցին պետական գնումների համակարգի գործունեության և պետության կարիքների համար իրականացվող գնումների ծավալի վրա: Մասնավորապես, 2013 թվականին ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռքբերելու նպատակով պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից հայտարարվել է 169.3 մլրդ դրամի նախահաշվային արժեքով գնումների ընթացակարգեր, որից 85 մլրդ դրամը բաժին է ընկել ապրանքների ձեռքբերմանը,

50.5 մլրդ դրամը՝ աշխատանքների կատարմանը, իսկ 33.7 մլրդ դրամը՝ ծառայությունների մատուցմանը:¹



Գծապատկեր 1. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների նախահաշվային արժեքների կառուցվածքը 2013 թվականին

Ինչ վերաբերում է ըստ ընթացակարգերի հայտարարված մրցույթներին, ապա ամենամեծ տեսակարար կշիռը կազմել են շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացված գնումները՝ շուրջ 122.8 մլրդ դրամ: Հիշյալ եղանակով իրականացված գնումներից 83.մլրդ դրամ կազմել են ապրանքների, իսկ 30.8 մլրդ դրամ ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացված գնումները:

Աղյուսակ 1²

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած մրցույթներն ըստ ընթացակարգերի (մլն դրամ)

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	17 573.6	669.5	733.8	18 976.9
Պարզեցված ընթացակարգեր	962.2	383.2	418.5	1 763.8
Շրջանակային համաձայնագրեր	8 927.5	83 074.1	30 790.7	122 792.3
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	16 586.4	896.8	1 552.3	19 035.5
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	6 504.5	-	188.1	6 692.6
Մրցակցային երկխոսություններ	-	-	60828.0	60828.0

¹ «Հաշվետվություն 2013 թ.գնումների գործընթացի վերաբերյալ» Գնումների աջակցման կենտրոնի ՊՈԱԿ: www.minfin.am

² «Հաշվետվություն 2013 թ.գնումների գործընթացի վերաբերյալ» Գնումների աջակցման կենտրոնի ՊՈԱԿ: www.minfin.am

Վերջին տարիներին հանրապետությունում պետական գնումների համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացված կարևոր քայլերից էր 2010 թվականին «Գնումների մասին» նոր օրենքի ընդունումը, որով ընդլայնվեց սուբյեկտների շրջանակը, այսինքն՝ ավելացան կազմակերպությունների նոր տեսակներ, որոնք իրենց գնումները պետք է իրականացնեն հիշյալ օրենքի համաձայն: Հաջորդ նշանակալի փոփոխությունը գնումների գործընթացի ապակենտրոնացումն էր: Բացի այդ, ներդրվեց գնումների բողոքարկման նոր ինստիտուտ, որն արտադատարանական կարգով գնումների գործընթացի մասնակիցների կողմից առկա բողոքների քննարկման նպատակ էր հետապնդում: Լուրջ քայլ կարելի է համարել էլեկտրոնային գնումների հնարավորության ընձեռումը, ըստ որի ներդրվեց էլեկտրոնային մրցույթների կազմակերպման ինստիտուտը, ինչը հնարավորություն է տալիս գնահատել հայտերը էլեկտրոնային եղանակով՝ նվազեցնելով սուբյեկտիվիզմի հնարավոր գործոնը գնումների գործընթացում:

Ըստ էության, հանրապետությունում գնումների համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրաիրավական դաշտը, իր բացթողումներով հանդերձ, հիմնականում բավարարում է ներկա փուլի պահանջներին: Սակայն օրենսդրական դրույթների գործնական կիրառման մեխանիզմների թերությունները և անկատարություններն էականորեն նվազեցնում են պետական գնումների համակարգի գործունեության արդյունավետությունը: Հատկանշական է, որ տարբեր կրներում պետական գնումների վերաբերյալ ազգային օրենսդրությունը զարգացել է իրավական համակարգերի և ձևավորված ավանդույթների առանձնահատկություններին համապատասխան: Այս առումով, այդ ոլորտը կանոնակարգող օրենսդրության կառուցվածքի, ինչպես նաև դրանում ընդգրկված իրավական ակտերի ծավալի և քանակի առումով առկա են էական տարբերություններ: Այսպես, եթե ԱՄՆ-ում գոյություն ունի կառավարական գնումների իրականացման կարգը սահմանող օրենսդրական ակտերի մի ամբողջ շարք, ապա Անգլիայում և Ճապոնիայում պետական գնումների մասին հիմնարար դրույթներն ընդգրկված են բյուջետային օրենսդրությունում, իսկ դրանց կիրառման հետ կապված դրույթները՝ կառավարության և պետական գերատեսչությունների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերում: Պետական գնումների կազմակերպման և կարգավորման եվրոպական մոդելի հիմքում ընկած է համաեվրոպական

մրցակցության համար պետական գնումների ազգային շուկաների բացության սկզբունքը:³

Ընդհանուր առմամբ, միջազգային պրակտիկայում պետական գնումների համակարգի զարգացման առումով կարելի է առանձնացնել մի քանի հատկանշական ուղղություններ: Առաջին, գնումների ազգային շուկաներն առավելագույն ազատականացվում են այլ երկրների մատակարարների համար և դրանով պայմանավորված մրցութային ընթացակարգերը ունիֆիկացվում և ստանդարտացվում են: Երկրորդ, ավելի շատ ուշադրություն է դարձվում պետական գնումների իրականացման ժամանակ բնապահպանական գործոնին: Երրորդ, պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը ներկայումս ունի համաշխարհային միտում, որը դրսևորվում է բյուջեի ծախսային մասի օպտիմալացման, պետության կողմից ավանդաբար իրականացված որոշ գործառույթներից հրաժարմամբ և դրանք մասնավոր բիզնեսին փոխանցմամբ:

Ատենախոսության երրորդ՝ «Պետական գնումների համակարգի կատարելագործման և բյուջետային միջոցների ռացիոնալ կառավարման ուղիները 37-ում», գլխում մշակվել են պետական գնումների համակարգի զարգացման օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ ուղիները, այդ համակարգի արդյունավետության գնահատման հիմնական մոտեցումները և կատարելագործման ռազմավարական ուղղությունները:

Ընդհանուր առմամբ, պետական գնումների համակարգի զարգացումը, նախ և առաջ, ենթադրում է դրա գործունեությունը կանոնակարգող օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործում: Պետական գնումների համակարգի բարեփոխումները պետք է ուղղված լինեն հետևյալ խնդիրների լուծմանը:

1. Գնումների գործընթացի կարգավորում.

- գործընթացի յուրաքանչյուր փուլում հնարավոր ռիսկերի գնահատում, մոնիտորինգի իրականացում, արդյունավետության վերլուծություն և կիրառվող ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողություն,
- գնումների ծավալի, օբյեկտի և միջոցի հիմնավորում,
- ապրանքների ընդունելի գների միջակայքի սահմանում,

³ Улыбышева Е. Либерализация рынков госзаказа в ЕС. Мировая экономика и международные отношения. 1995г. №12., Федорович В., Патрон А., Заварухин В. США: федеральная контрактная система и экономика, М.: Наука, 2002г. стр. 29

- նախորդ տարիներին կնքված պայմանագրերի վերագնահատում:
2. **Գնումների արդյունավետության ապահովում.**
 - արտադրանքի որակի վերաբերյալ փաստաթղթային հաստատում,
 - ապրանքների առանձին տեսակների գնումների ժամանակ որակավորման և հանբավի հետ կապված հստակ պահանջների սահմանում,
 - գնումներից առաջ կամ ընթացքում արտադրության պայմանների և արտադրանքի փորձաքննության անցկացում:
 3. **Պատվիրատուների իրավասությունների հստակեցում.**
 - գնումների տեսակով պայմանավորված պատվերների տեղաբաշխման եղանակների ընտրության հիմնավորում,
 - գնումների տեսակով պայմանավորված ապրանքների որակի վերաբերյալ հստակ պահանջների սահմանում և դրանց ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Գնումների ոլորտում բյուջետային միջոցների ռացիոնալ և արդյունավետ կառավարումը պետք է ուղղված լինի գնումային գործընթացի մասնակիցների անբարեխիղճ վարքագծի հետ կապված ռիսկերի նվազեցմանը: Խիստ կարևոր է նաև գնումային գործունեության մասնակիցների պատասխանատվության հստակ սահմանումը, որի գլխավոր նպատակը պետք է լինի պետական պատվերների պատշաճ և լիարժեք կատարման ապահովումը: Գնումների գործընթացը կանոնակարգող իրավական դաշտը պետք է նպաստի բարեխիղճ և բարձր որակավորում ունեցող մատակարարների ներգրավման միջոցով գնումների շուկայի զարգացմանը, ինչը ենթադրում է նման մատակարարներին ընտրելու հնարավորություն տվող չափորոշիչների սահմանում և կիրառում:

Ընդհանուր առմամբ, գնումային գործընթացի կատարելագործման տեսանկյունից պետք է կարևորել պետական պատվերների տեղաբաշխման ընթացակարգերի տարբերակումը, ելնելով գնումների տեսակներից, պայմանագրի առարկայի և ձեռք բերվելիք բարիքների առանձնահատկություններից: Այս տեսանկյունից, նպատակահարմար է առանձնացնել գնումների տեսակների հետևյալ 5 հիմնական խմբերը.

1. պարզ և ստանդարտ-համադրելի ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ,
2. տեխնիկապես բարդ արտադրանք և դեղորայք,
3. շինարարական կապալ, կապիտալ շինարարություն, նախագծա-հաշվարկային աշխատանքներ,

4. գիտահետազոտական, փորձա-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքներ,
5. գրականության և արվեստի աշխատանքներ, մտավոր սեփականության օբյեկտներ:

Առաջին խմբում ընդգրկված ապրանքներն ու ծառայությունները լայնորեն ներկայացված են շուկայում ինչպես արտադրանքի, այնպես էլ մատակարարների առումով: Դրանց տեխնիկական բնութագրերն ունեն մեկ կամ մի քանի առանցքային չափանիշներ, որոնք որոշում են տվյալ տեսակի գնումների սպառողական հատկանիշները: Նման ապրանքների գնումը կապված չէ բարձր ռիսկերի հետ: Հետևաբար, դրանց համար առավել նախընտրելի են պարզ ձևերը, որի միակ չափանիշը կլինի գինը:

Երկրորդ խմբում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գնումները ենթադրում են արտադրանքի որակի պարտադիր փորձաքննություն և բարձր որակավորում ունեցող մատակարար: Նման գնումների համար պարտադիր պետք է լինի որակի փաստաթղթային հավաստումը: Առաջարկների քննարկման ժամանակ պետք է հաշվի առնվեն արտադրանքի որակի և մատակարարի որակավորման չափանիշները, իսկ գնային գործոնի տեսակարար կշիռը չպետք է գերազանցի 50-55 տոկոսը: Գնումների այս տեսակի համար անհրաժեշտ է ընդլայնել պատվերների տեղաբաշխման կիրառվող ձևերը, ներառելով բազմափուլ մրցույթների անցկացումը:

Երրորդ խմբում ընդգրկված աշխատանքներն ու ծառայություններն ունեն պայմանագրի համաձայնեցման և կատարման հետ կապված էական առանձնահատկություններ, նախապատրաստական աշխատանքների մեծ շրջան, որի ընթացքում հստակեցվում են պայմանագրի հիմնական պայմանները, մատակարարին ներկայացվող պահանջները և աշխատանքների արդյունքները: Ձեռք բերվող բարիքների որակը կարելի է գնահատել միայն դրանց տրամադրման փաստով, ինչով պայմանավորված էլ պայմանագրի կատարման ռիսկերը բարձր են և կախված են մատակարարի որակավորումից, բարի համբավից և պայմանագրի ֆինանսական ապահովվածությունից: Նման գնումների անցկացման ժամանակ անհրաժեշտ է մատուցված համանման բարիքների որակի փաստաթղթային հավաստում, կապալառու ընկերության արտադրական հզորությունների փորձաքննություն: Գնումների այս տեսակի համար առավել նախընտրելի է նախաորակավորման ընտրության միջոցով միափուլ կամ բազմափուլ մրցույթների անցկացումը, ինչպես նաև մրցակցային բանակցությունները: Այս դեպքում գնային գործոնը չպետք է գերազանցի 40 տոկոսը:

Չորրորդ խմբում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գնումների ժամանակ մեծ նշանակություն ունի մատակարարը, որի ազդեցությունը մեծ է ստացվելիք արդյունքների վրա: Գնումների այս տեսակի համար անհրաժեշտ է ըստ կոնկրետ ոլորտների մասնագիտացված փորձաքննության գործուն ինստիտուտ, որի փորձագետների կողմից հայտի գնահատումը հնարավորություն կտա հասնել ցանկալի արդյունքների և խուսափել կոռուպցիոն համաձայնություններից: Որպես գնահատման չափանիշներ պետք է կիրառել որակական, որակավորման և համբավի չափանիշները: Այս դեպքում պատվերների տեղաբաշխման առավել նախընտրելի ձև է հանդիսանում մրցույթների անցկացումը, ինչպես նաև մրցակցային բանակցությունները՝ գնային գործոնի 20-40 տոկոսի պահպանմամբ:

Հինգերորդ խմբում ընդգրկված ապրանքների ու ծառայությունների գնումները, ինչպես և նախորդ խմբում ընդգրկվածները, ունեն զգալի ռիսկեր, միաժամանակ ունենալով մի շարք առանձնահատկություններ: Այս դեպքում ևս խիստ մեծ է մասնագիտական փորձաքննության դերը: Որպես գնումների առավել նախընտրելի եղանակ կարող է հանդիսանալ մրցույթների անցկացումը՝ 20-40 տոկոս գնային գործոնի պայմաններում:

Վերոհիշյալ համակարգի ներդրումը, հեղինակի կարծիքով, հնարավորություն կտա ապահովել.

- պետական պատվերների տեղաբաշխման բոլոր փուլերի կառավարելիություն և թափանցիկություն,
- պայմանագրերի կատարման որակի և ժամկետների համար պատասխանատվության աստիճանի բարձրացման միջոցով պատվիրատուների շահագրգռվածություն՝ առավելագույն արդյունավետությամբ բավարարելու պետական կարիքները,
- պատվերների տեղաբաշխման ընթացակարգերի ֆորմալ պահանջների կրճատումն բովանդակային ապահովման միջոցով,
- անբարեխիղճ մրցակցության դրսևորման ռիսկերի կրճատման համար անհրաժեշտ պայմաններ,
- բարեխիղճ և հուսալի մատակարարների առաջնահերթ մասնակցություն պատվերների տեղաբաշխման գործընթացին:

Ըստ էության, խիստ կարևորվում է նաև պետական գնումների համակարգի տնտեսական արդյունավետության գնահատումը, որը հանդիսանում է այդ համակարգի տարբեր մակարդակների էֆեկտիվության ինտեգրալ ցուցանիշ և համակարգի բոլոր ինստիտուտների և մեխանիզմների փոխգործակցության

արդյունք: Պետական գնումների համակարգի արդյունավետությունը պետք է դիտարկել որպես համալիր հասկացություն, որն իր մեջ ներառում է առաջին, որպես պետական ծախսերի և դրանց միջոցով ստացված արդյունքների հարաբերություն, երկրորդ, պետական պատվերների տեղաբաշխման և իրականացման գործընթացի տարբեր փուլերում գնումային գործունեության խնայողականություն, և երրորդ, համակարգի արտաքին էֆեկտիվություն՝ որպես պետական գնումներից մուլտիպլիկատորի էֆեկտի արդյունք: Ընդ որում, հեղինակի կարծիքով պետական գնումների արդյունավետությունը, խնայողականությունը և արտաքին էֆեկտիվությունը սերտորեն կապված են միմյանց հետ և արտացոլում են հանրային ծախսերի էֆեկտիվության տարբեր ասպեկտները:

Պետական գնումների համակարգի գործունեության արդյունավետության ապահովման կարևոր նախապայմաններից է համապատասխան տեղեկատվական բազայի ձևավորումը: Պետական պատվիրատուները պետք է տիրապետեն լիարժեք տեղեկատվության տնտեսական կապերի արդյունավետ կառավարման համար, որոնց օբյեկտ են հանդիսանում պետական կարիքների համար գնվող ապրանքները և ծառայությունները: Նրանց կողմից պետական պատվերների ձևավորման և տեղաբաշխման բոլոր փուլերում տնտեսապես առավել նախընտրելի որոշումների ընդունումը, պայմանագրերի կնքումը և կատարումը, բյուջետային միջոցների օգտագործման վերահսկողության կազմակերպումը պետք է հիմնված լինեն տեղեկատվական հոսքերի համակարգի վրա: Վերջինիս կառուցվածքային տարրերի շարքում հատկապես պետք է առանձնացվում են այն տեղեկատվական հոսքերը, որոնք ապահովում են տեղեկություններ.

- մատակարարների ֆինանսական վիճակի վերաբերյալ՝ եկամուտների, շահույթի, ակտիվների կառուցվածքի, կապիտալ ներդրումների կտրվածքով,
- մատակարարների արտադրական գործունեության վերաբերյալ՝ արտադրական ծախսերի, պահուստների ծավալի, աշխատանքի արտադրողականության մասով,
- աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ՝ կադրերի որակավորում, դրանց ընտրության և վերապատրաստման համակարգ, աշխատանքի վարձատրության համակարգ,
- գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական գործունեության վերաբերյալ,
- արտաքին կազմակերպությունների, այդ թվում ենթակապալառուների և նյութական ռեսուրսների մատակարարների, ֆինանսավարկային

կազմակերպություններ հետ մատակարարների փոխհարաբերությունների մասին:

Պետական գնումների համակարգի տեղեկատվական ապահովվածությունը ենթադրում է տեղեկատվության օգտագործում և, հետևաբար, նաև համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում ոչ միայն նշված գործունեության կառավարման արդյունավետության բարձրացման, այլ նաև կոռուպցիային ակտիվորեն դիմագրավելու համար՝ պետական պատվերների տեղաբաշխման վերաբերյալ տեղեկատվության հասանելիության շրջանակների ընդլայնման և գնումային ընթացակարգերի թափանցիկության բարձրացման ճանապարհով: Պետական գնումների միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ լայն տեղեկատվական ապահովվածությունը հնարավորություն է տալիս պատվերների տեղաբաշխման գործընթացին ներգրավել մասնակիցների ավելի մեծ քանակ, ինչը բարենպաստ մրցակցային միջավայր է ստեղծում և պետական պատվիրատուներին հնարավորություն է տալիս առավել ձեռնտու պամաններով կնքելու պայմանագրեր: Միևնույն ժամանակ, նոր տեխնոլոգիաների օգտագործումը հանգեցնում է պատվիրատուների և մատակարարների շփումների հնարավորինս կրճատմանը և գնումային ընթացակարգերի թափանցիկության բարձրացմանը:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքերը և հակիրճ ձևակերպված են եզրահանգումները՝

1. Պետական գնումների համակարգը, ըստ էության, կարելի է դիտարկել որպես համախառն պահանջարկի ձևավորման կարևոր գործոն, որն էական ազդեցություն ունի տնտեսական աճի և բնակչության զբաղվածության ապահովման վրա: Պետական պատվերները, հանդիսանալով համախառն պահանջարկի մի մասը, ուղղակիորեն ազդում են պետական ծախսերի չափի և արտադրության ծավալների վրա: Պետական գնումների ծավալը զգալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների՝ մասնավորապես, համախառն ներքին արդյունքի վրա: Պետությունն, իրականացնելով իր ծախսերը, որոշակի ապրանքների և ծառայությունների գծով ստեղծում է լրացուցիչ պահանջարկ, ինչն էլ հանգեցնում է ՀՆԱ-ի աճին: Մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց ստանալով համապատասխան պետական ֆինանսական միջոցներ, տնտեսավարող սուբյեկտներն ավելացնում են սեփական ծախսերը սպառման նկատմամբ սահմանային հակվածության հիման վրա, դրանով իսկ նպաստելով ընդհանուր պահանջարկի և ՀՆԱ-ի ավելացմանը:

2. Պետական կարիքների համար ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների շուկան ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին, դրա կենսագործունությունը կարևոր նշանակություն ունի տնտեսավարման ֆինանսատնտեսական պայմանների ստեղծման համար: Երկրորդ, պետությունը հանդիսանում է միակ սպառողը և, որպես այդպիսին, ունի շուկայում միակ գնորդին հատուկ բոլոր հատկանիշները: Նա վերահսկում է կոնկրետ բարիքների նկատմամբ պահանջարկը, հանդես գալով որպես դրա միակ գնորդ: Երրորդ, պետական տնտեսավարման այնպիսի կարևոր առանձնահատկություն, ինչպիսին է ապագա գնորդի կողմից ապրանքի հիմնական բնութագրիչների որոշումը, կրճատում է տնտեսավարող սուբյեկտների կողմից առևտրային ծրագրերի կազմման հնարավորությունները: Չորրորդ, պետական գնումների նպատակով հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը, որպես կանոն, բավականաչափ մեծ է, ինչի պատճառով պետությունը շուկայում իրականացնում է ինչպես գնորդի, այնպես էլ ներդրողի գործառույթներ, ինչը բնութագրական չէ մրցակցային շուկայի համար: Հինգերորդ, ի դեմս պետության, արտադրողները (մատակարարները) ձեռք են բերում կայուն և վճարունակ գործընկերոջ, որն ապահովագրված է շուկայական ռիսկերից:
3. Պետական գնումների համակարգի զարգացման հիմնական միտումները և բնորոշ գծերը պայմանավորված են յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով: Պետական կարիքների բավարարման նպատակով գնումների կազմակերպման միջազգային փորձի վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի քանի հետևություններ: Նախ և առաջ, արևմտյան երկրներում չի օգտագործվում «պետական կարիքների համար գնումներ» հասկացությունը: Դրա փոխարեն օգտագործվում է «public purchasing» հասկացությունը, որը թարգմանաբար նշանակում է «հասարակական կարիքների համար գնումներ»: Այսինքն, պետությունը չի դիտարկվում որպես հասարակության կարիքներից տարբերվող սեփական կարիքներ ունեցող սուբյեկտ: Այս առումով, մեզանում լայնորեն կիրառվող «պետական գնումներ» հասկացությունն ամբողջությամբ համապատասխանում է միջազգային պրակտիկայում ընդունված «կառավարական գնումներ (government procurement)» հասկացությանը, քանի որ երկուսն էլ ցույց են տալիս գնումային գործունեության սուբյեկտին՝ կառավարությանը, որը որոշում է պետական գնումների ընթացակարգային և իրավական առանձնահատկությունները:
4. Պետական գնումների համակարգի զարգացման իրավական բազայի

կատարելագործման հիմնական նպատակը պետք է լինի պետական գնումների թափանցիկ և արդյունավետ համակարգի ձևավորումը, որը կնախատեսի պետական և մունիցիպալ գնումների պլանավորում, գնումների կազմակերպման միասնական տեխնոլոգիական ցիկլի ապահովում, գնումների տարբեր տեսակների առանձնահատկությունների հաշվի առնում, տնտեսության ինովացիոն զարգացման աջակցություն: Իրավական կարգավորման առարկա պետք է դառնան գնումային գործընթացի միմյանց հետ փոխկապակցված բոլոր փուլերը, որոնք իրենց մեջ կներառեն.

- պետական և մունիցիպալ կարիքների բավարարման ծրագրերի մշակումը,
- ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնումների պատվերների տեղաբաշխումը,
- պետական պայմանագրերի կնքումը, կատարումը և դադարեցումը,
- պայմանագրի կատարման արդյունքների համալիր վերլուծությունը,
- գնումների ոլորտում սահմանված կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը,
- սահմանված պահանջների խախտման համար պատասխանատվության մեխանիզմների կիրառումը,
- պետական և մունիցիպալ գնումների հետ կապված տեղեկատվական հոսքերի բացության ապահովումը:

5. Չնայած ներկայումս օրենսդրական կարգավորման ոլորտում արձանագրված դրական առաջընթացին, այդուհանդերձ, դեռս գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք զգալիորեն նվազեցնում են պետական գնումների համակարգի գործունեության արդյունավետությունը: Մասնավորապես.

- գնումների արդյունավետությունը գնահատվում է ոչ թե ձեռք բերված արդյունքով, այլ կանոնակարգային ընթացակարգերի ֆորմալ պահպանմամբ,
- ունիվերսալ ընթացակարգերի կիրառումը, որոնք երբեմն հաշվի չեն առնում գնումների տարբեր տեսակների առանձնահատկությունները,
- պատվերների տեղաբաշխման գործընթացին ոչ բարեխիղճ մասնակցիների ներգրավման հնարավորությունը:

6. Պետական գնումների համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններ են հանդիսանում.

- պետական գնումների համակարգը կանոնակարգող նորմատիվ-իրավական բազայի զարգացումը,

- գնումների համար կիրառվող բոլոր տեխնոլոգիաների կանոնակարգումը և կատարելագործումը,
 - գնումների ծավալի պլանավորման և կանխատեսման համակարգի կատարելագործումը,
 - պետական պատվերների ձևավորման, տեղաբաշխման և կատարման գործընթացին բոլոր շահագրգիռ անձանց ազատ մասնակցության ապահովումը:
 - մրցութային ընթացակարգերի անցկացման օպերատիվ վերահսկողության համակարգի ձևավորումը:
7. Պետական գնումները պետք է դիտարկվեն որպես ներքին պահանջարկի խթանման կարևոր գործիք: Պետությունը, տեղաբաշխելով պատվերներ և կնքելով ապրանքների և ծառայությունների մատակարարման պայմանագրեր, նպաստում է այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմանը, ինչպիսիք են վճարունակ պահանջարկի և զբաղվածության ապահովումը, տնտեսության ճյուղերի խթանումը և այլն: Ակնհայտ է, որ հատկապես ճգնաժամային իրավիճակներում պետական կարիքների բավարարումը պետք է տեղի ունենա հայրենական արտադրության խթանման և, մասնավորապես, ներմուծման փոխարինման հիման վրա: Հետևաբար, հակաճգնաժամային կարգավորման, ինչպես նաև հայրենական արտադրության խթանման կարևոր գործիքներից մեկը կարող է դառնալ պետական գնումների գործընթացում տեղական արտադրողների նկատմամբ հովանավորչական միջոցների կիրառումը:
8. Պետական գնումների համակարգի բարեփոխումների հաջորդ կարևոր ուղղությունը փոքր բիզնեսին աջակցության նպատակով համապատասխան մոտեցումների կիրառումն է: Գաղտնիք չէ, որ հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային փուլերում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված փոքր բիզնեսի ֆինանսավորման խնդիրները դառնում են առավել քան հրատապ: Վարկային ռեսուրսների և ֆինանսավարման այլ միջոցների դժվարամատչելիության պայմաններում պետական կարիքների բավարարման նպատակով ապրանքների և ծառայությունների արտադրության և մատակարարման համար պետական պայմանագրերը դառնում են փոքր և միջին բիզնեսի երաշխավորված ֆինանսավորման միակ և կարևոր աղբյուրը: Այս առումով, անհրաժեշտ է մրցույթի մասնակիցների նկատմամբ սահմանել նաև որակավորման այնպիսի պահանջներ, որոնք հնարավորություն կտան ստանալ համապատասխան

տեղեկատվություն մասնակիցներին փոքր և միջին բիզնեսին դասելու, հայրենական արտադրողին պարգևելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել պետական պատվերների կատարող հանդիսացող հայրենական արտադրողների և փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների ռեեստր:

Չետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում:

1. Բոստանջյան Վ., Սարգսյան Գ. «Պետական գնումների համակարգի դերը շուկայական տնտեսության պայմաններում»: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-4(16): Երևան, «Անանիա Շիրակացի» հրատ. 2012թ. էջ 9-15:

2. Սարգսյան Գ. «Պետական գնումների էությունը և տնտեսական բովանդակությունը»: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-4(16): Երևան, «Անանիա Շիրակացի» հրատ. 2012թ. էջ 84-90:

3. Սարգսյան Գ. «Պետական գնումների կազմակերպման միջազգային փորձը և հիմնական մոդելները»: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-1(17): Երևան, «Անանիա Շիրակացի» հրատ. 2013թ. էջ 87-94:

4. Սարգսյան Գ. «Պետական գնումների համակարգի զարգացման օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ ուղիները»: «Այլընտրանք» Գիտական հանդես: Երևան 2013, N 2(9). էջ 68-76:

МАРГАРЯН ГРИГОР АМБАРЦУМОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЦИОНАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ БЮДЖЕТНЫМИ СРЕДСТВАМИ И УСОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика и управление хозяйством и его секторами”.

Защита диссертации состоится 4-го июля 2014г. в 15:00 на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском Государственном Университете по адресу г. Ереван, 0009, ул.Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению и разработке путей решения основных проблем рационального управления бюджетными средствами и развития системы государственных закупок в условиях рыночной экономики. Система государственных закупок, основная задача которой – удовлетворение государственных и общественных нужд, является одним из важных звеньев распределения значительной части бюджетных средств и в определенной степени обуславливает эффективность бюджетных расходов. Несмотря на то обстоятельство, что за последние годы в основу реформ системы государственных закупок были заложены принципы рыночного хозяйствования и либеральные подходы к обработке и распределению государственных заказов, тем не менее, отсутствие четко разработанных подходов стратегии и тактики, недооценка экономической роли государства, и как следствие – отсутствие комплексного подхода к процессу реформ, привели к тому, что система закупок выделяется низким уровнем эффективности. Одновременно, ограниченность государственных финансовых ресурсов требует наиболее эффективного и экономичного использования бюджетных средств, которое, в числе других проблем, предполагает также реформирование системы государственных закупок. Цель исследования – разработка подходов и предложений, направленных на повышение эффективности системы государственных закупок и рациональное управление бюджетными средствами. В работе изучена сущность и экономическое содержание государственных закупок, проанализированы его теоретические и методологические основы. В результате исследования закономерностей развития системы государственных закупок в разных экономических системах разработаны концептуальные подходы к реформированию организационных, законодательных и хозяйственных механизмов

государственных закупок, изучены институциональные механизмы осуществления государственных закупок и особенности их деятельности в условиях рыночной экономики. В результате изучения международного опыта деятельности системы государственных закупок в диссертации оценены возможности ее применения в республике.

На основе изучения действующей в республике системы государственных закупок, выявлены имеющиеся основные проблемы в сфере повышения ее эффективности и разработаны предложения, направленные на рациональное управление бюджетными расходами и повышения эффективности системы государственных закупок.

Основные научные результаты работы состоят в следующем:

- в результате всестороннего анализа теоретических основ понятий “государственные закупки” и “государственные заказы”, выявлены макроэкономические и организационно-правовые предпосылки обеспечения эффективности закупок, осуществляемых для государственных нужд, в результате анализа функций системы государственных закупок, обоснована необходимость стимуляции отечественного производства и совокупного спроса;
- в целях комплексного реформирования всех этапов процесса государственных закупок, разработаны такие концептуальные подходы и механизмы развития системы государственных закупок, которые дают возможность обеспечить необходимую взаимосвязанность между этими этапами;
- в результате всестороннего анализа деятельности системы государственных закупок в республике, выявлены имеющиеся упущения и недостатки, предложены решения в направлении повышения эффективности использования бюджетных средств путем совершенствования системы государственных закупок, разработана совокупность показателей и критериев оценки эффективности системы государственных закупок;
- в целях развития системы государственных закупок и повышения эффективности данной деятельности, предложено осуществлять дифференциацию процедур распределения государственных заказов, исходя из видов закупок, особенностей предмета договора и приобретаемых благ.

MARGARYAN GRIGOR

**MAIN ISSUES OF BUDGETARY FUNDS RATIONAL MANAGEMENT AND
STATE PROCUREMENT SYSTEM IMPROVEMENT
IN THE REPUBLIC OF ARMENIA**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – “Economics and Management in the fields of Economy”.

The defense of the thesis will take place on 2014, at July 04, 14:00 o'clock at 015 council of Economics SCC RA at Yerevan State University.

Address: 52, Abovyan St., Yerevan, 0009

Dissertation is devoted to revealing the main issues of budgetary funds rational management and state procurement system improvement under conditions of market economy and processing the ways of solution. The State Procurement System, the main task of which is meeting the state and public needs, is considered as one of the most important circles for distribution of considerable part of Budgetary Funds and stipulates for efficiency of budget expenses. In spite of the circumstance that during the last years the principles of market economy were put on the base of the state procurement system improvements and free approaches for the state orders processing and distribution, so absence of clearly developed strategic and tactical approaches, underestimation of economic role of the state and as a consequence, absence of complex approach to improvements process caused to that the procurement system appears with low level of efficiency. At the same time limitation of the state financial resources requires more efficient and safe usage of budgetary funds that along with the other tasks also supposes reformation of the state procurement system.

The purpose of research is development of approaches and offers directed to raising the efficiency of the state procurement system and rational management of budgetary funds under conditions of market economy. The essence of the state procurement and economic contents were examined, the economic and methodological grounds were analyzed in

research work. As a result of regularity research for development of the state procurement system the conceptual approaches for procurement organization, reformation of legislative and economic mechanisms were developed, institutional mechanisms for implementation of the state procurements and peculiarities of operation were explored under conditions of market economy. As a result of analysis of international experience of the state procurement system, pointed in dissertation, the opportunities of its application were estimated in the republic.

The main issues available in the field of efficiency increase were revealed on the base of exploration of the state procurement system operating in the republic and offers directed to budgetary expenses rational management and raising the efficiency of the state procurement system were developed.

The main scientific results of work are as follows:

- Macroeconomic and organizational-legal preconditions for procurement efficiency provision for the state needs were revealed as a result of multilateral analysis of theoretical grounds of the notions “state procurement” and “state orders”, in conditions of contemporary economy as a result of analysis of functions of the state procurement system, the necessity of domestic production and stimulation of gross demand through the state procurement system was grounded as a result of analysis of functions of the state procurement system under conditions of modern economy;
- With a purpose of complex reforms of all stages of the state procurement system the conceptual approaches and mechanisms of the state procurement system development were processed that will give an opportunity to provide necessary interrelation between the stages;
- The available omissions and disadvantages were revealed as a result of multilateral analysis for operation of the state procurement system in the republic, the offers were made for raising the efficiency of budgetary funds usage, the complex group for estimation indexes and standards of the state procurement system were developed;
- With a purpose of raising the efficiency for development of the state procurement system and the process, it was offered to make differentiation of state orders distribution, proceeding from the procurement types, the subject matter of contract and peculiarities of acquired items.